

ԿՈՆՖԼԻԿՏՆԵՐԻ ՍՈՑԻՈՍՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՇԱՐԺԱՌԹՆԵՐԻ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ՀԱՐԱՎՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓՈՆԱԿԵՐՊՎՈՂ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Լ. Շ. ՄԿՐՏՅԱՆ

Կոնֆլիկտների՝ որպես սոցիալական փոխազդեցությունների, լինելիության ու ծավալման գործընթացներում սոցիոմշակութային շարժառիթների դերի ու նշանակության բացահայտումը, հատկապես երբ խոսքը փոխակերպվող հասարակությունների մասին է, կարևոր է ոչ միայն նրանց առանցքային լինելու, այլ նաև այդ կոնֆլիկտների և ընդհանրապես փոխակերպումների հետևանքով սկիզբ առած համակարգային ճգնաժամի հաղթահարման ուղիների ու պայմանների բացահայտման տեսանկյունից: Չէ՞ որ բազմաթիվ այլ շարժառիթների հետ միասին սոցիոմշակութային գործոններն առանձնակի հնչեղություն են ստանում այն ժամանակ, երբ սոցիալական համակարգը անցում է կատարում որակական մի որոշակիությունից մյուսին:

Փոխակերպվող համակարգի, դրա մեջ բարեփոխումների ընթացքի, այնպես էլ արդյունքների վրա կոնֆլիկտների ունեցած ազդեցությունը, այդ համակարգում անմիջականորեն ներառված սուբյեկտների անձնային իմաստավորումից բացի, ունի նաև ընդհանուր-գիտական իմաստավորում: Այդ կապակցությամբ պետք է նշել, որ մասնագիտական գրականության մեջ, անկախ առօրեական պատկերացումներից, կոնֆլիկտները դիտարկվում են և՛ իբրև կառուցողական (կոնստրուկտիվ), և՛ ապակառուցողական (դեստրուկտիվ) երևույթներ: Այսինքն՝ խոսքը այն մասին է, թե կոնֆլիկտներն ինչ դեր են խաղում հասարակական կառույցների, հաստատությունների, հարաբերությունների պահպանման կամ քայքայման, փոխանցման ու նորացման գործընթացներում: Հետևաբար հարց է առաջանում, թե այն սոցիալական փոխազդեցությունները, որոնք իրենց բնույթով կոնֆլիկտային են, կարո՞ղ են դառնալ կամ լինել սոցիալական համակարգերում փոփոխությունների ու փոխակերպումների իրականացման միջոցը, կրողը: Կոնֆլիկտի՝ իբրև փոփոխությունների ու փոխակերպումների կրողի և իրականացնողի, գաղափարը նոր չէ և լայնորեն կիրառություն է գտնել բազմապիսի կոնֆլիկտաբանական և ընդհանրապես սոցիալական բնույթի ուսումնասիրություններում¹: Այս դեպքում խնդիրը քննարկելով փոխակերպվող հասարակությունների համատեքստում և հաշվի առնելով հետխորհրդային հասարակությունների փորձը՝ կարելի է եզրակացնել, որ կոնֆլիկտային փոխազդեցությունները դարձան համակարգային փոխակերպումների ոչ միայն ամենավաղ դրսևորումները, այլ նաև անմիջական կրողներն ու իրականացողները, ընդ որում, նաև սոցիոմշակութային տեսանկյունից:

Փոխակերպումների սկզբնական փուլում, երբ փորձ է արվում արագ «ձերբազատվել» առկա համակարգային որոշակիությունից՝ իմաստուցիոնալ, կառուցվածքային, ֆունկցիոնալ առումով, նաև սոցիոմշակութային շարժառիթներով պայմանավորված կոնֆլիկտների հիմնական «առաքելությունը», ըստ էության,

¹ Ավելի մանրամասն տե՛ս P. John Lederach, *Preparing for Peace. Conflict transformation across cultures* Syracuse, University Press. New York, 1995, Լ. Козер, *Функции социального конфликта*, М., 2000:

ապակառուցողական է: Նրանք մի կողմից արտահայտում են հասարակական համակարգ «ներքափանցող» սոցիոմշակութային նոր բնութագիր ունեցող երևույթների անհամատեղելիությունը առկա սոցիոմշակութային կազմավորումների հետ, մյուս կողմից, ելնելով այդ անհամատեղելիությունից և ստեղծված սոցիոմշակութային երկվությունից, միտված են հին կառույցների, հաստատությունների ու հարաբերությունների քայքայմանը: Այդ իսկ պատճառով համակարգային ճգնաժամերը իրենց ամենախտորը դրսևորումներում՝ անկայունություն ու աններդաշնակություն, անորոշություն ու անկազմակերպվածություն, առավելապես բնորոշ են փոխակերպումների վերոնշյալ սկզբնական փուլին: Կոնֆլիկտների մասն ապակառուցողականությունը միանգամայն բնական է, քանզի նախկին սոցիոմշակութային առանձնահատկությունները, ինչպես ցույց է տալիս հետխորհրդային հասարակությունների փորձը, փոխակերպումների առաջին փուլում դեռևս արմատացած են հասարակական կառույցների, հաստատությունների ու հարաբերությունների մեջ, իսկ նորերը, չնայած իրենց ակնհայտ ու առերես ցանկալիությանն ու սոցիալական անհրաժեշտությանը, չափազանց օտար են հասարակական հարաբերություններում ու գործընթացներում ներառված սոցիալական սուբյեկտների, նրանց ինքնիրացման ու ինքնադրսևորման տեսանկյունից: Անցումային փուլերում ցանկացած սոցիոմշակութային նորույթ ունի ապագործառնական նշանակություն, քանի որ խախտում է նախկինում ձևավորված սոցիոմշակութային հարաբերական միասնականության հավասարակշռությունը: Հնի և նորի այս բախման մեջ սոցիոմշակութային նոր իրողությունները անհրաժեշտորեն միտված են սոցիոմշակութային նախկին կազմավորումների քայքայմանը, որպեսզի ստեղծեն իրենց գործառնության համար անհրաժեշտ պայմաններ:

Ինչ վերաբերում է փոխակերպումների երկրորդ շրջանին, երբ քիչ թե շատ հաղթահարվել է համակարգային խորը ճգնաժամը, կառավարելի ու կանխատեսելի են սոցիալ-տնտեսական, քաղաքական գործընթացները, նոր սոցիոմշակութային իրողությունները ստացել են քիչ թե շատ համարժեք անձնային ու հասարակական դրսևորումներ, պապ սոցիոմշակութային իմաստով կոնֆլիկտները կառուցողական նշանակություն ունեն: Նրանք ոչ միայն նպաստում, այլ նաև անմիջականորեն մասնակցում են սոցիոմշակութային ռեալության մեջ նոր տարրերի ներմուծման ու ադապտացման, նրանց ինստիտուցիոնալացման գործընթացներին: Որպես սոցիալական փոխազդեցություններ՝ կոնֆլիկտները հանդես են գալիս իբրև կրեատիվ միավորներ, որոնց սահմաններում ձևավորվում, շրջանառության մեջ են դրվում և հաստատվում հասարակական համակարգի որակական որոշակիության նոր սոցիոմշակութային հիմունքները:

Սակայն փոխակերպվող հասարակությունների մի շարք ոլորտներում տարբեր ռիթմով և տեմպով ընթացող փոխակերպումները, այդ թվում նաև օբյեկտիվ ու սուբյեկտիվ գործոններով պայմանավորված, կոնֆլիկտների շարունակվող ապակառուցողականությունը, արգելակում են փոխակերպումների ընթացքը և սահմանափակում սոցիոմշակութային որոշակիության հաստատման ու համակարգային ճգնաժամի հաղթահարման հնարավորությունները: Այս դեպքում հարց է ծագում, թե ինչպես և ինչպիսի միջոցներով են հնարավոր վերոհիշյալ համակարգային խնդիրների ու նպատակների լուծումն ու իրականացումը:

Հիմնախնդիրը հանգամանորեն լուսաբանելու համար անհրաժեշտ է հաշվի առնել կոնֆլիկտների դիմամիկային՝ առաջացմանը, ծավալմանն ու հաղթահարմանը վերաբերող տեսական ու, հատկապես, գործնական այն հարուստ փորձը, որը 50-60-ական թթ. հնարավոր դարձավ հետպատերազմյան շրջանում արդյունաբերության զարգացման, տեղային բնութ կրող էթնոքաղաքական ու աշխար-

հաքաղաքական հակամարտությունների, նրանց հետևանքների ուսումնասիրության շնորհիվ: Ի՞նչպես և ի՞նչպիսի միջոցներ են անհրաժեշտ կոնֆլիկտների հաղթահարման համար, արդյո՞ք պետք է հաշվի առնել տվյալ հասարակության էթնոմշակութային առանձնահատկությունները, թե՞ ոչ: Սրանք այն հարցերն են, որոնց պատասխանները տեսաբաններին և, ինչու չէ, նաև կիրառական ոլորտի ներկայացուցիչներին բաժանել են երկու բանակի:

Նրանց մի մասը պնդում է, որ կոնֆլիկտների սահմանման, լուծման, կարգավորման կամ կառավարման հնարքները, միջոցներն ու ռազմավարությունները, որոնք ձևավորվում են որևէ սոցիոմշակութային համատեքստում, հնարավոր է տեղափոխել մեկ այլ սոցիոմշակութային համատեքստ: Այսինքն՝ կոնֆլիկտների տեսական ու պրակտիկ գիտելիքներն իրենց բնույթով համընդհանուր են և մշակութային իմաստով չեզոք: Ըստ էության կոնֆլիկտների ու նրանց հաղթահարման հնարքների ու միջոցների նկատմամբ այսպիսի դիրքորոշումն ունի ընդգրծված տեխնիկական բնույթ:

Մյուս մասը համոզված է, որ կոնֆլիկտների բնութագրումը, սահմանումը, ինչպես նաև նրանց լուծման ու կարգավորման հիմնախնդիրները չի կարելի դիտարկել սոցիոմշակութային համատեքստից դուրս, քանի որ վերջինս «ջերմոց» է, ուր և ձևակերպվում են տվյալ հասարակության մեջ կոնֆլիկտների առաջացման ու հաղթահարման վերաբերյալ մոտեցումներն ու դիրքորոշումները²:

Դիտարկելով այս մոտեցումները, նրանց ընձեռած հնարավորություններն ու սահմանափակումները՝ պետք է ասել, որ դրանցից ոչ մեկը բացարձակ իմաստով ընդունելի լինել չի կարող: Ինչ վերաբերում է առաջին մոտեցմանը, ապա փոխակերպվող հասարակությունների փորձը ցույց է տալիս, որ յուրաքանչյուր հետազոտական մոտեցում և մոդել ունի նաև սոցիոմշակութային որոշակի պայմանավորվածություն, հետևաբար յուրաքանչյուր հասարակության պարագայում պետք է ճշգրտել այն սկզբունքները, մեխանիզմներն ու ուղիները, որոնք կիրառելի են կոնֆլիկտների սահմանման, նրանց կարգավորման ու լուծման բնագավառում, հատկապես եթե խոսքը սոցիոմշակութային շարժառիթներով պայմանավորված կոնֆլիկտների մասին է: Սակայն, մյուս կողմից, անհերքելի է նաև այն փաստը, որ բոլոր հասարակություններն էլ օժտված են գործառնության, վերարտադրության ու զարգացման համընդհանուր օրինաչափություններով, ինչի շնորհիվ սոցիալական համակարգերի վերլուծությունը հնարավոր է իրականացնել միևնույն տեսական մոդելների շրջանակներում: Հետևաբար այլ հասարակություններին վերաբերող թե՛ տեսական, թե՛ գործնական փորձառությունը կարող է օգտակար լինել ցանկացած փոխակերպվող հասարակությունում կոնֆլիկտների ու նրանց դիմամիկայի վերլուծության ու հաղթահարման տեսանկյունից: Տվյալ դեպքում կարևոր և անհրաժեշտ է հաշվի առնել.

- համաշխարհային-քաղաքակրթական փորձը. տեսական ու գործնական միտքը այս ոլորտում կուտակել է գիտելիքների լուրջ պաշար, որը կարող է կիրառական նշանակություն ունենալ բոլոր կոնֆլիկտաբանական հետազոտություններում, և հրաժարվել նրա ընձեռած հնարավորություններից խելամիտ չէ,

- մյուս կողմից՝ յուրաքանչյուր հասարակություն ունի իր կյանքի կազմակերպման էթնոմշակութային առանձնահատկությունները, և առանց դրանք հաշվի առնելու վերոհիշյալ փորձի կիրառումը կկորցնի իր արդյունավետությունն ու օգտակարությունը:

Փոխակերպվող հասարակություններում կոնֆլիկտների փոխազդեցությունների դիմամիկայ, դրանց առանձնահատկություններն ու էական կողմերը քննելիս

² Sissu F. John Lederach, նշվ. աշխ., էջ 63-68.

պարզվում է, որ այդ հասարակություններին բնորոշ սոցիոմշակութային երկվոր-
թյան, անորոշության ու հակասականության երևույթները առկա են նաև
կոնֆլիկտների հաղթահարմանն ուղղված սկզբունքներում, ուղիներում ու միջոց-
ներում: Եվ սա կոնֆլիկտների հաղթահարման հիմնական խոչընդոտներից մեկն է:

Այդ խոչընդոտների թվում է նաև, այսպես կոչված, սոցիալական կատեգորի-
զացիան, երբ հասարակության տարբեր սոցիալական հանրույթներ միմյանց
տեսնում են «մենք-նրանք», «իմը-քոնը» երկընտրանքների տեսանկյունից: Սա իր
հերթին բազմապիսի սոցիալական փոխազդեցությունների մեջ համագեցնում է
ավելի շուտ միմյանց միջև տարբերությունների, քան թե մասնությունների ընդգրծ-
մանը, հաղորդակցման «համարժեք լեզվի» աստիճանական կորստին,
հետևաբար՝ ընդգծված կոնֆլիկտային և ապակառուցողական, անհաշտելիու-
թյան ու չզիջելու դիրքերից հանդես գալուն: Այս դեպքում առաջնային է դառնում
այն հարցը, թե որ էմպիրիկ պայմաններում կիրառվող ռազմավարություններն ու
մարտավարությունները կդառնան արդյունավետ կոնֆլիկտների հաղթահարման
համար:

Թե՛ փոխակերպվող և թե՛ կայուն հասարակություններում կոնֆլիկտների
հաղթահարման պայմանների շուրջ մասնագիտական գրականության մեջ առկա
տեսակետները բյուրեղանում են հետևյալում.

- իրավական-նորմատիվ դաշտի կայացում, ինչը խաղի հավասար պայման-
ներ կհաստատի օրինականության սահմաններում կոնֆլիկտների կարգավոր-
ման գործընթացների համար,

- բարոյահոգեբանական մթնոլորտի բարելավում, հատկապես վստահու-
թյան առկայություն, ինչը կնպաստի կոնֆլիկտների հաղթահարման «սոցիալա-
կան կապիտալի» աճին,

- սոցիալական այնպիսի կառույցների ստեղծում, որոնք կմեղմացնեն, կմիջ-
նորդավորեն կոնֆլիկտային փոխազդեցությունները և հնարավորություն կընձե-
ռեն նրանցում անմիջականորեն ներառված սուբյեկտներին ընդգրկելու համա-
տեղ գործունեության մեջ³:

Սակայն, այս նախապայմանների հետ միասին, որոնցից կարելի է բխեցնել
կոնֆլիկտող կողմերի միջև *սոցիալական կապերի նշանակության, սոցիալական
հանրույթում ներառված լինելու սոցիալական պահանջմունքի* և, ընդհանրապես,
*փոխկապվածության գիտակցման գործոնների*⁴ նշանակությունը, անհրաժեշտ է
հստակեցնել նաև այն հարցը, թե հասարակության յուրաքանչյուր անդամի հա-
մար որոնք են կոնֆլիկտների լուծման ու հաղթահարման լեզվաբանական ձևերն ու մի-
ջոցները, ինչ սկզբունքների հիման վրա պետք է սահմանել, կիրառել և ընտրել
դրանք: Այս հարցերին հստակ պատասխաններ չտալու դեպքում հասարակու-
թյան մեջ սոցիոմշակութային փոխակերպումների հետևանքով ծագած կոնֆ-
լիկտները կշարունակվեն, քանի որ նրանց լուծման ու հաղթահարման սկզբունք-
ները, ձևերն ու արդյունքները ընդունելի կլինեն միայն մի մասի համար, մինչդեռ
մյուս մասը չի դադարի արտահայտել կոնֆլիկտային դիրքորոշումներն ու վար-
քային նմուշները:

Մասնագիտական գրականության մեջ հետազոտական այս բնագավառը
ստացել է «*կոնֆլիկտի լուծում*» անվանումը՝ անկախ այն բանից, թե ինչպիսի
մոտեցում է ձևավորվել կոնֆլիկտային փոխազդեցությունների հաղթահարման

³ Տե՛ս **A. B. Дмитриев**, Конфликтология, Гардарики, М., 2002, էջ 205-217, **P. J. Folger, S. M. Poole, K. R. Stutman**, Working through conflict. Strategies for relationships, Groups and Organizations. Longman. New York, 1997, էջ 245-250:

⁴ Տե՛ս **Z. J. Rubin, G. D. Pruitt, S. H. Kim**, Social Conflict. Escalation, Stalemate, and Settlement, McGraw-Hill Inc. New York, 1994, էջ 127-130:

հնարավորության խնդրի շուրջ: Վերջինս, շրջանառության մեջ դնելով մի շարք հասկացություններ, բացահայտում է կոնֆլիկտային փոխազդեցությունների ավարտման կամ թուլացման, հաղթահարման կամ նվազման հետ առնչվող գործընթացների էությունը: Դրանք են.

1. լուծում, 2. կարգավորում, 3. կառավարում, 4. տրանսֆորմացիա:

Սակայն դրանց կիրառությունը միանշանակ չէ, և տարբեր հեղինակներ այս հասկացությունների բովանդակային փոխհարաբերություններին տարբեր մեկնաբանություն են տալիս: Մասնավորապես, երբեմն «լուծում» հասկացությունը կիրառվում է լայն իմաստով՝ ենթադրելով ինչպես կոնֆլիկտի կառավարում, այնպես էլ կարգավորում, և ընդհանրապես կոնֆլիկտային փոխազդեցության թուլացման ու նվազման ցանկացած դրսևորում⁵: Որոշ դեպքերում մման հասկացության ծանրաբեռնվածությամբ հանդես է գալիս «կարգավորում» հասկացությունը⁶:

Թեև վերոհիշյալ հասկացություններն ունեն բովանդակային ընդհանրություն և բնութագրում են կոնֆլիկտային փոխազդեցությունների բախումնային, լարվածությանը հաջորդող փուլը, այնուամենայնիվ դրանք միմյանցից տարբերվում են թե՛ բովանդակային, թե՛ կիրառական իմաստով: Մասնագիտական գրականության մեջ այս հասկացություններին տրվող սահմանումները նախ և առաջ կախված են այն բանից, թե սոցիալական համակարգերում ծագող հակասություններն ու կոնֆլիկտներն ինչպես են իմաստավորվում, և հայեցակետային ինչպիսի մոտեցումներ են ձևավորվել նրանց գոյության ու գործառնության շուրջ:

Այն հարցը, թե ինչպես և ինչ սկզբունքներով են կառուցված ու կազմակերպված սոցիալական համակարգերը, և ի՞նչ բնույթի փոխազդեցություններ են նրանցում գերակշռում, սկիզբ է դրել երկու մոտեցումների, որոնք տեսաբաններին բաժանել են երկու բանակի: Առաջինը հիմնավորում է կոնֆլիկտների ժամանակավոր, պատահական բնույթը և նրանց հաղթահարելիության հնարավորությունը սոցիալական կազմակերպվածության կատարելագործման շնորհիվ: Երկրորդ տեսակետը հակված է կոնֆլիկտները դիտարկել իբրև բոլոր սոցիալական համակարգերի անխուսափելի և անհաղթահարելի բաղադրիչներ: Հիմք ընդունելով այս մոտեցումները՝ անհրաժեշտ է մշել, որ երկու դեպքում էլ տեսաբանները հող նախապատրաստեցին կոնֆլիկտների լուծման բնագավառում երկու մեթոդաբանական մոտեցումների ձևավորման համար:

• *Առաջին մոտեցումը* սոցիալական համակարգերում սոցիալական լարվածություններն ու կոնֆլիկտները դիտարկում է իբրև ապակառուցողական, այսինքն՝ անցանկալի երևույթներ, որոնք անհրաժեշտորեն պետք է հաղթահարել համակարգային հավասարակշռության ու ներդաշնակության հաստատման նպատակով: Գործընթացային իմաստով կոնֆլիկտն ունի սկիզբ, ծավալում և ավարտ, հետևաբար սոցիալական կարգի բարելավումն ու կատարելագործումը կարիք ունի կիրառելու մի շարք հնարքներ ու ռազմավարություններ, ինչը կբերի վերոհիշյալ կոնֆլիկտների վերացմանը: Այս մեթոդաբանական մոտեցման շրջանակներում է ձևավորվել «լուծում» հասկացությունը, որը «...ենթադրում է ինչպես պատճառների, այնպես էլ կողմերի միջև կոնֆլիկտի դրսևորման և նրանց դիրքորոշումներում անհամատեղելիության աղբյուրների վերացում»⁷: Ընդ որում,

⁵ Տե՛ս James A. Schellenberg, Conflict resolution: theory, research, and practice, State University of New York Press New York, 1996, էջ 9:

⁶ Տե՛ս Z. J. Rubin, G. D. Pruitt, S. H. Kim, նշվ. աշխ., էջ 168-182, A. B. Дмитриев, նշվ. աշխ., էջ 221-246:

⁷ William I. Zartman, Toward the resolution of international conflicts, In: Peacemaking in international conflict: methods and techniques, ed. by Zartman I. William and Rasmussen J. Lewis. United States Institute of Peace Press. Washington, 2001, p. 11.

պատմականորեն «լուծում» հասկացությունը ավելի վաղ է շրջանառության մեջ դրվել սոցիալական կարգի ու կազմակերպվածության մասին վերոհիշյալ հայեցակետի գերակա լինելու շնորհիվ: Սակայն որոշ հեղինակների կարծիքով այս հասկացությունն իր մեջ որոշակի երկակիություն է պարունակում, քանզի մի կողմից ենթադրում է գործընթաց, իսկ մյուս կողմից՝ գործընթացի ավարտ⁸: Լուծումը՝ որպես գործընթաց, ուղեկցվում է այնպիսի փոփոխություններով, որոնք աստիճանաբար և հետևողականորեն այնպես են վերակազմում ու վերածակերպում կոնֆլիկտային փոխազդեցությունները, որ նրանք վերածվում են առնվազն ներդաշնակ ու համագործակցային փոխազդեցությունների:

Հայեցակետային նման մոտեցումը սուր քննադատության ենթարկվեց իր չափազանց իդեալիստական և իրականության հետ որևէ առնչություն չունենալու պատճառով, ինչը խթանեց հայեցակետային նոր դիրքորոշման կազմավորումը:

• **Երկրորդ մոտեցումը** սոցիալական կարգի ու կազմակերպման խնդրի վերախնամատվորման դիրքերից պնդում է, որ սոցիալական համակարգերում հակասություններն ու կոնֆլիկտները, իբրև այդ համակարգի կառուցվածքային ու կազմակերպական առանձնահատկությունների հետևանք, անխուսափելի են, և որ դրանք սկզբունքորեն անհնար է վերջնականապես հաղթահարել: Կոնֆլիկտները հնարավոր է միայն ժամանակավորապես դադարեցնել, քանի որ դրանք մարդկային հանրության կենսագործունեության անընդմեջ և ինքնաբերականորեն են, և այս պարագայում խոսք կարող է լինել ոչ թե կոնֆլիկտների լուծման, այլ ընդամենը նրանց կարգավորման մասին: «Կոնֆլիկտի կարգավորումը նշանակում է համաձայնության ձեռքբերում կողմերի միջև, որը հնարավորություն է տալիս նրանց ավարտել զինված կոնֆլիկտը: Այն դադարեցնում է կոնֆլիկտային վարքի բռնի փուլը: Սա ենթադրում է ավարտ, բայց իրականում կոնֆլիկտները, որոնք կարգավորվել են, հաճախ ավելի ուշ վերսկսվում են»⁹:

Որոշ հեղինակներ «կարգավորումը» սահմանում են որպես «կոնֆլիկտային գործընթացների այնպիսի ուղղորդում, որ մեծացնում է դրանց ցանկալի ուղղությամբ զարգանալու հնարավորությունը»¹⁰: Նման սահմանումը իր բովանդակությամբ ավելի մոտ է այժմ լայնորեն կիրառվող «կառավարում» հասկացությանը:

Երբ տեսաբանները և, հատկապես, կիրառական ոլորտի ներկայացուցիչները կասկածի տակ դրեցին կոնֆլիկտների ինչպես վերջնականապես լուծման հնարավորությունը, այնպես էլ լուծման նպատակահարմարությունը, անհրաժեշտությունը հարկադրեց մշակել և ապա կիրառել այնպիսի ռազմավարություններ ու հնարքներ, որոնց օգնությամբ կոնֆլիկտային փոխազդեցությունները կողորդվեն կանխատեսելի մոտվերով ու կադապարներով: Այս իմաստով երկրորդ հայեցակետային մոտեցման շրջանակներում երևան եկավ «կառավարում» հասկացությունը: Այս հասկացությունը ենթադրում է կոնֆլիկտի վերջնական լուծման անհնարիմություն, բայց ընդունում է բացասական հետևանքների ու տարրերի վրա ազդելու հնարավորությունը՝ իր հետ բերելով կոնֆլիկտի ծավալման բռնի ձևերի սահմանափակում, հակադեմ մոտեցումների լարվածության թուլացում¹¹:

⁸ St' u H. Miall, O. Ramsbotham, T. Woodhouse, Contemporary conflict resolution: the prevention, management and transformation of deadly conflicts, Polity Press.-Cambridge, 2002, էջ 21:

⁹ Նույն տեղում:

¹⁰ Т. Н. Кильмашкина. Конфликтология: социальные конфликты. М., 2004, с. 88.

¹¹ St' u P. John Lederach, նշվ. աշխ., էջ 16-17:

Սակայն թե՛ սոցիալ-փիլիսոփայական ու տեսական-սոցիոլոգիական, թե՛ կոնֆլիկտաբանական հետազա հետազոտությունները այս ոլորտ ներմուծեցին ևս մի հասկացություն, որն ընդլայնեց ու համալրեց կոնֆլիկտի մասին եղած մասնագիտական ըմբռումները: Խոսքը «տրանսֆորմացիա» հասկացության մասին է, որը մի շարք հետազոտողների կարծիքով կարող է առավել համարժեք նկարագրել խաղաղություն հաստատելու բոլոր ձեռնարկումներն ու խիզախումները: Բանն այն է, որ իրականում դժվար է մարդկային գործողություններն ու փոխազդեցություններն այնպես կառավարել, ինչպես ֆիզիկական աշխարհի երևույթները: «Կառավարում» հասկացությունը ապահովում է այս ոլորտի մասնագիտացումը, բայց չի իմաստավորում փոփոխության նպատակի հարցը՝ սահմանափակվելով խաղաղության հաստատման ու լուծման ընդամենը տեխնիկական ու պրակտիկ կողմի ընդգծմամբ: «Ի տարբերություն լուծման և կառավարման՝ տրանսֆորմացիայի գաղափարը չի առաջարկում... կոնֆլիկտի վերացում կամ վերահսկում, բայց... ընդգծում է... նրա ի բնե դիալեկտիկական բնույթը: Սոցիալական կոնֆլիկտը մարդկային գործունեության արդյունք է, որը բնականորեն ներառված է հարաբերությունների մեջ: Այն մի երևույթ է, որը փոխակերպում է իրադարձությունները, հարաբերությունները, որոնցում կոնֆլիկտը ծավալվել է, և իհարկե նրանց, ովքեր դրանք ստեղծել են»¹²:

Մամրամասնելով «տրանսֆորմացիա» հասկացության նշանակությունը՝ դժվար չէ նկատել, որ կոնֆլիկտը՝ որպես սոցիալական փոխազդեցություն, ազդում է նրանում ներառված սուբյեկտների պատկերացումների, սպասումների, հարաբերությունների բնույթի վրա ինչպես դրականորեն, երբ հաղթահարվում են առկա հակասություններն ու լարվածությունները, այնպես էլ բացասականորեն, երբ կոնֆլիկտային փոխազդեցությունները սաստկանալով հարուցում են ապակառուցողական հետևանքներ (միջսուբյեկտային հարաբերությունների քայքայում, ոչ համարժեք պատկերացումների ու կարծիքների ձևավորում և այլն): Ջ. Լեդերմակը համոզված է, որ կոնֆլիկտի տրանսֆորմացիայի մասին խոսելիս, եթե նույնիսկ այն չի նվազում և ունի ապակառուցողական դրսևորումներ, շեշտը պետք է դրվի այն կառուցողական ճանապարհով ուղղորդելու վրա: Կոնֆլիկտային փոխազդեցությունների տրանսֆորմացիայի պարագայում փոխադարձ ապակառուցողական, անկայուն և կործանարար հիմունքներով միջսուբյեկտային հարաբերությունները փոխարինվում են փոխադարձաբար արդյունավետ ու համագործակցային հիմունքներով: Կոնֆլիկտների ազդեցությամբ հասարակական համակարգն ու կառուցվածքը, որում ամրակայված են հարաբերությունները, տրանսֆորմացիա են ապրում: Այսինքն՝ կոնֆլիկտը հասարակության համար համակարգային փոփոխության ինքնին փոխակերպվող ազենտ է, որը փոխում և փոխվում է նաև համապատասխան ջանքերի կիրառման շնորհիվ: «...Որպես հասկացություն՝ տրանսֆորմացիան և՛ նկարագրում է կոնֆլիկտի դինամիկան, և՛ պարտադրում է համընդհանուր նպատակ՝ փոխելով ապակառուցողական հարաբերակցային մոլշմները, և ձգտելով համակարգային փոփոխության՝ կառուցել խաղաղություն»¹³:

Կոնֆլիկտային փոխազդեցությունների նկատմամբ այս հասկացության կիրառումը հատկապես փոխակերպվող հասարակությունների համատեքստում արդարացված է, որովհետև.

առաջին՝ սոցիոմշակութային փոխակերպումների հետևանքով անկանխատեսելիության ու երբեմն անկառավարելիության հատկությունները, որոնք ձեռք

¹² Նույն տեղում, էջ 17:

¹³ Նույն տեղում, էջ 18:

են բերում հասարակական գործընթացները, հնարավորություն են տալիս կոնֆլիկտային փոխազդեցությունները քննել համակարգային փոխակերպումների համատեքստում:

Երկրորդ՝ համակարգային, կառուցվածքային, ինչպես նաև անձնային մակարդակում պատկերացումների, արժեքների, վարքանմուշային ձևերի փոխակերպումները առավել պարզորոշ դրսևորվում են կոնֆլիկտային փոխազդեցությունների համատեքստում:

Երրորդ՝ տրանսֆորմացիա հասկացությունը փորձում է ամփոփել և ընդհանրացնել կոնֆլիկտային փոխադեցությունների ավարտման կամ դադարեցման բոլոր հնարավոր տարբերակներն ու ձևերը: Հետևաբար այս տեսանկյունից պետք է դիտարկել փոխակերպվող հասարակություններում կոնֆլիկտների հաղթահարման հիմնախնդիրը, քանի որ վերջինս իր բնույթով խնդրահարույց է:

Այն հարցը, թե արդյոք անհրաժեշտ է հաղթահարել այդ կոնֆլիկտները, ունի միանշանակորեն դրական պատասխան: Այդ կոնֆլիկտների հաղթահարումը կարևոր է այն իմաստով, որ նրանց լինելիության ու ծավալման գործընթացներում սոցիոմշակութային շարժառիթները պետք է դադարեն ունենալ այն նշանակությունը, ինչ-որ ունեն փոխակերպվող հասարակությունների պայմաններում: Հակառակ դեպքում ոչ մի հասարակական համակարգ չի կարող ունենալ որակական որոշակիության ու սոցիոմշակութային միասնականության հաստատման հավակնություն: Բազմապիսի տնտեսական, քաղաքական ու սոցիալական, ինքնության ձևերի կոնֆլիկտները միշտ էլ ուղեկցելու են սոցիալական զանազան համակարգերին և դրանց հիմքում ևս կարող են լինել սոցիոմշակութային շարժառիթներ: Սակայն նրանց անխուսափելիության հանգամանքի հետ միասին պետք է նշել, որ փոխակերպվող հասարակությունների պարագայում դրանց բնույթը հիմնային է, ինչն էականորեն փոխում է դրանց հաղթահարման հիմնախնդրի նշանակությունը:

Արդի սոցիալ-փիլիսոփայական (և ոչ միայն) հետազոտությունները, որոնք ավելի հաճախ իրականանում են բազմապիսի գիտակարգերի հատման միջակայքում, հնարավորություն են ընձեռում գիտական հետաքրքրություն ներկայացնող երևույթները դիտարկել և վերլուծել այնպիսի հասկացութային ապարատի, հետազոտական մեթոդների ու մոտեցումների օգնությամբ, որոնք առաջին հայացքից կարծես թե առնչություն չունեն քննարկվող հիմնահարցի հետ: Այդպիսիների թվում է նաև «դիսկուրս» հասկացությունը, որի իմացաբանական և մեթոդաբանական նշանակությունը ժամանակակից հետազոտություններում առանցքային է: Սոցիալ-փիլիսոփայական հետազոտությունների բնագավառ թափանցելով լեզվաբանությունից՝ դիսկուրսը վերաիմաստավորվեց և ստացավ իր ներկա «կարգավիճակը», երբ մեկտեղվեցին լեզվաբանական ու հոգեվերլուծական, սոցիալական ու փիլիսոփայական ուսումնասիրությունները:

Փոխակերպվող հասարակությունների համատեքստում կոնֆլիկտների սոցիոմշակութային շարժառիթների վերլուծության համար «դիսկուրսի» կիրառումը տեղին է այն պատճառով, որ այն կարող է ավելի քան համարժեք ներկայացնել կոնֆլիկտային փոխազդեցությունների և դրանց դիմամիկայի առանձնահատկությունների հիմնապատճառները, որոնք հաճախ մույմիսկ գիտակցված էլ չեն: Այս տեսանկյունից դիսկուրսի վերլուծությունը, որում ներկայացվում են կոնֆլիկտները, հնարավորություն կընձեռեն ցույց տալ այդ կոնֆլիկտների հաղթահարման արգելքները, հնարավորությունները և ուղիները:

Չնայած ակնհայտ բարդությանը՝ դիսկուրս հասկացությունը, լայն իմաստով, փոփոխում սլոսկոսիոսի և սլոսկոսիոսկոսի գործոնների բարդ միասնություն է:

որը պատկերացում է տալիս հաղորդակցության մասնակիցների, նրանց դիրքորոշումների ու նպատակների, հաղորդագրության արտադրության ու ընկալման պայմանների մասին¹⁴: Այն երևույթների մասին խոսելու եղանակ է, կերպ, դիրքորոշումների գիտակցված հարաբերակցման ձև, որը չի բացառում ոչ հակամարտություն, ոչ համաձայնություն, ոչ էլ հարաբերությունների այն համախումբը, որն ընկած է այդ բևեռների միջև¹⁵: Այսինքն՝ դիսկուրսը տարածության և ժամանակի մեջ կարծիքների, պատկերացումների, մտեցումների, հայացքների ներկայացման, հարաբերակցման ուղիղ ձև է, որն ունի, այդ թվում մաս մշակութային, պայմանավորվածություն և ծառայում է իրականությունն ըմբռնելու ու կառուցելու սեփական մտեցումների ձևավորմանը: Այն միաժամանակ ենթադրում է ակնհայտ և ոչ ակնհայտ, գիտակցված և չգիտակցված տարրեր, որոնք կամա թե կամա արտահայտում են սոցիալական հանրությունում փոխազդեցությունների կազմակերպման առանձնահատկությունները: Այսինքն՝ պարզվում է, որ «գերիշխող դիսկուրսները կամ «ճշմարտությունները» վերահսկում են, թե ով կարող է և չի կարող խոսել, ինչի մասին կարելի է և չի կարելի խոսել, ինչպես և որ համատեքստում և... ինչ կարող ենք և չենք կարող լսել: Գերիշխող դիսկուրսները կարող են ցույց տալ, թե ում ձայնն է հնչում և ումը լռեցվում, ում գիտելիքն է արտոնություն ստանում, իսկ ումը «լուսանցքային» դառնում»¹⁶:

Դիսկուրսը, ընդգրկված լինելով կյանքի սոցիալական համատեքստի մեջ և կրելով նրա ազդեցությունը, հնարավորություն է ընձեռում նրա վերլուծության շնորհիվ բացահայտել առկա խնդիրների իրական՝ գոյաբանական ու իմացաբանական հիմքերը՝ գուցե չնշելով դրանց լուծման ձևերն ու եղանակները, սակայն վեր հանելով այսպես կոչված «տեքստի» թաքնված դրոշմատեսությունները¹⁷:

Այս դեպքում ի՞նչպիսին է համահասարակական դիսկուրսը փոխակերպվող հասարակություններում, և ի՞նչպես է այն ազդում կոնֆլիկտային փոխազդեցությունների դինամիկայի վրա: Ո՞վքեր և ի՞նչպես են ներառված այդ դիսկուրսի մեջ:

Փոխակերպվող հասարակություններում համահասարակական դիսկուրսի վերլուծության փորձերը ցույց են տալիս, որ որպես այդպիսին այն բեկորացված է, այսինքն՝ հասարակական կարևոր երևույթների քննարկումը, նրանց ռեֆլեքսիան տեղի է ունենում սոցիոմշակութային տարրեր հիմունքներով ձևավորված դիսկուրսներում, որոնցից յուրաքանչյուրը արտահայտում է համընդհանուր նշանակություն ձեռք բերելու իր հավակնությունները: Համընդհանուր նշանակություն ձեռք բերելու նրանց հավակնության հիմքում ընկած է սեփական սոցիոմշակութային պատկերացումների ունիվերսալության ու բացարձակ ճշմարիտ լինելու կողմնորոշումը, որի լեգիտիմացումը նրանցից յուրաքանչյուրը որոնում և իրականացնում է սեփական միջոցներով՝ մեկը մատնանշելով անցյալը, մյուսը ներկայի հնարավորությունները և այլն: Այդ դիսկուրսները, ելնելով սեփական սոցիոմշակութային ձևաչափի առանձնահատկություններից, կազմավորում են սոցիոմշակութային շարժառիթներով պայմանավորված կոնֆլիկտների դիտարկման, վերլուծության, հետևաբար դրանց լուծման ու հաղթահարման միջոցների և ուղիների սեփական պատկերացումները: Սակայն, նրանց վերլուծությունը թույլ է տալիս

¹⁴ Տե՛ս «Новейший философский словарь», Минск, 1998, էջ 222:

¹⁵ Տե՛ս **А. П. Кулапин**, Философско-социальный анализ социальных конфликтов: основные понятия и положения, в кн.: «Современная конфликтология в контексте культуры мира», М., 2001, էջ 26:

¹⁶ **Bagshaw Dale**, Challenging discourses in violence: From the schoolyard to the United Nations. p. 4. www.conferences.unimelb.edu.au/fkagship/Abstracts/Bagshaw.pdf.

¹⁷ Տե՛ս «Новейший философский словарь», 1998, էջ 222:

եզրակացնելու, որ հասարակական մակարդակում, այնուամենայնիվ, գերիշխում է բնույթով մեմիշխանական՝ «մեկի հաղթանակը մյուսի պարտությունն է» սկզբունքով առաջնորդվող դիսկուրսը՝ որպես առկա դիսկուրսների բյուրեղացում, որը կամա թե ակամա անընդհատ վերարտադրում է հասարակական այն հարաբերությունները, կառույցներն ու վարքամուշային ձևերը, որոնք բխում են փոխակերպվող հասարակությունների առանձնահատկություններից: «Մենք-նրանք»-ի սոցիալ-հոգեբանական դիրքորոշումը, որը բնորոշ է վերոհիշյալ դիսկուրսներին, օրինաչափորեն հանգեցնում է տրվածությունից վեր կանգնելու անհրճարհնությամբ: Այս պարագայում, անկախ կիրառվող հակակոնֆլիկտային միջոցառումներից, կոնֆլիկտի տրանսֆորմացիան չի հանգեցնում կոնֆլիկտների հաղթահարմանը: Դրանք այլ ձևերի մեջ սոցիոմշակութային գործոնների ազդեցությամբ շարունակում են ծավալվել՝ ուղեկցելով համակարգային բարեփոխումներին և խոչընդոտելով սոցիոմշակութային միասնականության կայացմանը: Այս դեպքում ի՞նչպես է հնարավոր այդ համակարգային խնդիրների լուծումը:

Հայտնի տեսաբան Վ. Ժաբրին, քննարկելով կոնֆլիկտի հետ սերտորեն կապված հնարավոր դիսկուրսների հիմնահարցը, նկատում է, որ կոնֆլիկտները, մրանց դիտարկման ու լուծման վերաբերյալ մոտեցումները կամա թե ակամա անընդհատ վերարտադրվում են թե՛ կոնֆլիկտի մասնակիցների, թե՛ լուծման ու կարգավորման փորձեր իրականացողների կողմից այն պարզ պատճառով, որ համահասարակական մակարդակում կարող են գերիշխել «բացառող», հիմքում բռնություն ենթադրող դիսկուրսներն ու սոցիալական գործողությունները, ինչը խանգարում ու խոչընդոտում է կոնֆլիկտների և մրանց ուղեկցող երևույթների ավարտը¹⁸: Այդ դեպքում հարց է առաջանում, թե ինչպիսին պետք է լինի համահասարակական դիսկուրսը, և ինչպիսի պայմաններում պիտի ընթանա կոնֆլիկտների տրանսֆորմացիան, որպեսզի հանգեցնի սոցիոմշակութային երկվությունից ու անորոշությունից ձերբազատմանն ու միասնականության հաստատմանը: Այս հարցերի պատասխանները կամա թե ակամա ուղղորդում են դեպի արդի հետստրուկտուրալիստական ավանդույթներ, որտեղ քննադատական դիրքորոշումների ամրապնդման հետևանքով ժամանակակալից տեսաբանների գերակշռող մասը առաջարկում է կոնֆլիկտային փոխազդեցությունները չդիտարկել մրանց մասնակիցների ու գործողությունների (սուբյեկտ-օբյեկտ հարաբերությունների) տեսանկյունից: Շեշտը պետք է դնել կոնֆլիկտող կողմերի սոցիալական երկխոսության ու համագործակցության շնորհիվ համընդհանուր դիսկուրսի փոփոխության, այսինքն՝ հակադիսկուրսի առաջացման վրա, ինչը սկզբունքորեն կփոխի կոնֆլիկտային փոխազդեցությունների բնույթը: Երևույթները դիտարկումների տեսանկյունից չդիտարկելու և բռնության թաքցված տարրերը վերհանելու հակադիսկուրսի միտվածությունն ունի ելակետային նշանակություն, քանի որ կարող է նպաստել կոնֆլիկտների մետաֆիզիկական բնույթի հաղթահարմանն ու փոխակերպմանը:

Այս գաղափարները համահունչ են Յ. Հաբերմասի՝ «դիսկուրսի էթիկայի» շըրջանակներում մշակված դիրքորոշմանը, որտեղ նա «Ի՞նչ պետք է անել» բարոյագիտական հարցադրմանը պատասխանելու փորձերում նկատում է, որ «...բարոյական-պրակտիկ դիսկուրսները պահանջում են կապերը խզել սովորական կոնկրետ բարոյականության ինքնին ենթադրվող իրողությունների հետ: Պահանջվում է նաև պահպանել հեռավորություն այն կենսական համատեքստերից, որոնց հետ

¹⁸ St' u H. Miall, O. Ramsbotham, T. Woodhouse, Contemporary conflict resolution: the prevention, management and transformation of deadly conflicts. Polity Press. Cambridge. 2002. էջ 59:

անքակտելիորեն ներհյուսված է մեր սեփական ինքնանույնականությունը: Անհրաժեշտ են ունիվերսալ կերպով ընդլայնված դիսկուրսի հաղորդակցական նախադրյալներ, որին, ըստ հնարավորության, կմասնակցեին բոլոր նրանք, ովքեր սկզբունքորեն շահագրգռված են, և որի մեջ բոլորը կարող են արտահայտել սեփական փաստարկները՝ հիմնավորելով վարկածային դիրքորոշումը համապատասխան նորմերի ու վարքագծերի նկատմամբ, երբ նրանց կարևորություն ունենալու հավակնությունները կասկածի տակ են դրվում: Միայն այս պայմաններում է կառուցվում առավել բարձր մակարդակի ինտերսուբյեկտիվություն, որտեղ յուրաքանչյուրի հեռանկարը ներհյուսված է բոլորի հեռանկարի հետ»¹⁹: Սահմանելով դիսկուրսի պայմանները՝ Յու. Հաբերմասը շարունակում է. «Բարոյական պրակտիկ դիսկուրսը նշանակում է իր ներքին հեռանկարից բխած մեր կոմունիկատիվ հանրության ընդլայնում: Նորմերը, որոնք առաջարկվում են այդ ֆորումի քննարկմանը, կարող են հիմնավորված լինել և հավանության արժանանալ այն ժամանակ, երբ նրանք պատկանում են բոլորի ընդհանուր շահին»²⁰:

Այս դիրքորոշումը տարածելով փոխակերպվող հասարակություններում կոնֆլիկտների հաղթահարման հիմնահարցի լուսաբանման վրա, ընդհանրացնելով կենսական-համահասարակական նշանակություն ունեցող երևույթների շուրջ դիրքորոշումները՝ կարելի է եզրակացնել, որ բոլոր այն միջոցառումները, որոնք ուղղված են սոցիոմշակութային շարժառիթներով պայմանավորված կոնֆլիկտների տրանսֆորմացիային, չեն կարող հաջող ավարտ ունենալ, քանի դեռ չի ձևավորվել համընդհանրական դիսկուրս, որում ներառված կլինեն հասարակական բոլոր սուբյեկտներն ու շերտերը իրենց սոցիոմշակութային առանձնահատկություններով: Միայն տարբեր սոցիոմշակութային պատկերացումների «հանդիպման» և միջսուբյեկտային հարաբերությունների հաստատման միջոցով կարելի է հասնել սոցիոմշակութային միասնականության: Սոցիոմշակութային միասնականությունը չի կարող լինել գործառնող սոցիոմշակութային սկզբունքների պարզ համախումբը: Այն պետք է լինի սոցիալական հանրության, շերտերի ու խավերի փոխգործակցության արդյունք, որպեսզի բավարարի նրանց պահանջ-մուրքները, շահերը ու նպատակները, ապահովի նրանց ներառվածությունը հասարակական կառույցների, հաստատությունների ու հարաբերությունների վերարտադրությանն ու նորացման գործընթացներին:

Н. Ж. МКРТЧЯН - *Возможности преодоления социокультурных причин конфликтов в трансформационных обществах.* - В статье анализируется роль конфликтов в трансформационных обществах. Обосновывается деструктивная и конструктивная роль конфликтов в разных стадиях социокультурных трансформаций общественной системы. Преодоление социокультурных причин конфликтов видится в конструировании такого общественного дискурса, где все социальные общности и слои равноправно могли бы выдвигать свои социокультурные представления, принципы относительно общественно важных проблем. Их взаимовлияние привело бы к формированию относительного социокультурного единства.

¹⁹ Ю. Хабермас. Демократия. Разум. Нравственность. М., 1992, с. 21.

²⁰ Նույն տեղում, էջ 21-22: